

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԷԴԳԱՐ ՉԱԽՈՑԱՆ

Աշխարհի գրեթե բոլոր երկրներին միավորում է «ահաբեկչության դեմ պայքարի» գաղափարը: Ահաբեկչությունը սպառնալիք է այս կամ այն երկրի ինչպես պետականությանը, այնպես էլ խաղաղ բնակիչների անվտանգությանը:

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո նորանկախ Վրաստանի ուրուշ տարածքներ դուրս էին մնացել պետական վերահսկողությունից: Այսպես օրինակ՝ Պանկիսի կիրճում¹ արմատավորվել էին տարբեր տեղերից ներթափանցած իսլամական ծայրահեղականները և տեղի քիստ² բնակիչների հետ, որոնք կիսում էին ծայրահեղականների գաղափարները, սպառնալիք էին դարձել երկրի անվտանգությանը: Անշուշտ, նոր ձևավորված պետության համար դժվար էր միայնակ պայքարել պատրաստված գրոհայինների դեմ, ուստի ԱՄՆ-ն, օգտվելով առիթից, համագործակցության ձեռք մեկնեց Վրաստանին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասում հաստատվելու հեռահար նպատակներով: Պետք է նշել, որ Պանկիսի կիրճից սպասվող սպառնալիքները չէին կարող չանհանգստացնել Վրաստանի հարևան երկրներին, մասնավորապես Հայաստանի Հանրապետությանը: Դա հատկապես հավանական վտանգ էր Վրաստանի հայ համայնքի համար:

ԱՄՆ պետդեպարտամենտի հակաահաբեկչական բյուրոյի 2013 թ. զեկույցում³ ահաբեկչության վերաբերյալ տրված սահմանումների բոլոր տարրերն առկա էին նաև Վրաստանում, մասնավորապես Պանկի-

¹ Տե՛ս **Խեցոսո մամուլային կենտրոն**, Քանգոն; Գրքերի և թանգրաֆիլիայի, տեղագրության և լեզվաբանության գիտությունների ակադեմիան, 2008, էջ 282 (**Խ. Մամիսխիաշվիլի**, Պանկիսի անցյալն ու ներկան, Թբիլիսի, 2008):

² Պանկիսի կիրճում բնակվող մուսուլմանները հիմնականում 16-19-րդ դարերում վերաբնակեցված էթնիկ չեչեններ են, որոնց տեղաբնակներն անվանում են քիստեր: Նրանք միշտ չէ, որ խաղաղ հարաբերությունների մեջ են եղել տեղաբնակների հետ: 20-րդ դարի 90-ականներից սկսած՝ ռուս-չեչենական պատերազմից մինչև 2008 թ., կիրճը չեչեն գրոհայինների համար ռազմաբազա էր (տե՛ս **G. Sanikidze**, Islamic Resurgence in the Modern Caucasian Region: “Global” and “Local” Islam in the Pankisi Gorge, էջ 263):

³ Տե՛ս United States Department of State, “Country Reports on Terrorism 2013”, Executive Summary, April 2014, հասանելի է՝ <https://www.state.gov/documents/organization/225050.pdf>, 19.04.2019:

Forces) 200 զինծառայողների, որոնք աջակցեցին վրացական կողմին ահաբեկիչների դեմ պայքարում⁶: ԱՄՆ-ի համար Պանկիսի կիրճը վտանգ էր ներկայացնում, քանի որ այս տարածքում հաջողությամբ կարող էին պատսպարվել նաև Ալ-Քաիդայի ահաբեկիչները:

«GTEP» ծրագրի շրջանակում վերապատրաստվեց 2000 վրացի զինվորական, և ծախսվեց 64 մլն ԱՄՆ դոլար⁷: Գումարի մի մասը հատկացվեց զենք-զինամթերք, կապի միջոցներ և այլ պարագաներ ձեռք բերելու համար: Այս ծրագիրը սկիզբ դրեց ԱՄՆ-Վրաստան հարաբերությունների հետագա խորացմանը:

Անկախ Շևարդնաձեի գործադրած ջանքերից, որը կարողացել էր ահաբեկչության դեմ պայքարում ԱՄՆ-ին որպես գործընկեր ներգրավել, այնուամենայնիվ Վրաստանի համար շրջադարձային իրողություն էր «Վարդերի հեղափոխության» շնորհիվ իշխանության եկած, ԱՄՆ-ում կրթություն ստացած, «Միացյալ ազգային շարժում» կուսակցության երիտասարդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի արտաքին քաղաքականությունը⁸:

2004 թ. հունվարի 25-ին Սաակաշվիլին նախագահի երդմնակալության ժամանակ հստակ մատնանշեց ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ամրապնդման ու խորացման կարևորությունը և շնորհակալություն հայտնեց այդ երկրին դժվարին ժամանակներում վրաց ժողովրդի կողքին լինելու համար⁹: Նա միաժամանակ բարեկամության ձեռք մեկնեց Ռուսաստանին: Երդմնակալության այս հատվածն արժանացավ վրաց ժողովրդի բուռն հավանությանը:

Սաակաշվիլին որպես Վրաստանի նախագահ պաշտոնական այց է կատարել ՌԴ 2004 թ. փետրվարի 10-ին, որտեղ հանդիպել է նախագահ Պուտինի հետ¹⁰: Կողմերի քննարկման հիմնական առարկան հարաբերությունների հետագա զարգացումն ու ամրապնդումն էր, ինչպես նաև սահմանների ու ահաբեկչության կանխարգելման խնդիրները:

Այնուհետև Սաակաշվիլին պաշտոնական այց է կատարել ԱՄՆ և 2004 թ. փետրվարի 25-ին հանդիպել նախագահ Ջորջ Բուշի հետ¹¹:

⁶ Տե՛ս **Ch. Nodia, A. P. Scholtbach**, The Political Landscape of Georgia, “Political Parties: Achievements, Challenges and Prospects”, Eburon Delft 2006, էջ 18:

⁷ Տե՛ս “Green Berets Land in Georgia For 2-Year Training Program”, The New York Times, May 20, 2002, հասանելի է՝ <https://www.nytimes.com/2002/05/20/world/green-berets-land-in-georgia-for-2-year-training-program.html> 02.05.2019:

⁸ Տե՛ս **Kandelaki K.**, Georgia’s Rose Revolution: A Participant’s Pererspective United States Institute of Peace, Special Report 167, July 2006, հասանելի է՝ <http://www.usip.org/sites/default/files/sr167.pdf>

⁹ Տե՛ս ևս յերթացված իրադարձություններ, միջոցառումներ 2004 թ. օգոստոսի 25-ը (Վրաստանի նախագահներ, Միխեիլ Սաակաշվիլիի երդմնակալությունը – 25-ը հունվարի 2004 թ.), հասանելի է՝ <https://www.youtube.com/watch?v=Pu16jnY47gE>, 12.08.2019:

¹⁰ Տե՛ս “Владимир Путин встретился с Президентом Грузии Михаилом Саакашвили”, Kremlin.ru, 11 февраля 2004 года, 14:00, М., հասանելի է՝ <http://kremlin.ru/events/president/news/30340>, 12.08.2019:

¹¹ Տե՛ս “President Bush Welcomes Georgian President Saakashvili to White House”, The

Կողմերը վերահաստատել են բարեկամական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված ջանքերը: Մասկազվիլին այստեղ ընդգծել է, որ հպարտ են ԱՄՆ-ի հակահաբեկչական կոալիցիայի մասը լինելու համար և հատուկ շեշտում, որ գորք ունեն Իրաքում:

Ջորջ Բուշը 2005 թ. մայիսի 10-ին պաշտոնական այցով Վրաստանում գտնվելու ժամանակ Թբիլիսիի Ազատության հրապարակում ելույթ ունենալիս Ամերիկայի ժողովրդի անունից հատուկ շնորհակալություն է հայտնել Վրաստանի ժողովրդին ու կառավարությանը Աֆղանստանում և Իրաքում հակահաբեկչական գործողություններին մասնակցելու համար¹²: Հատկանշական է, որ 2007 թ. մայիսի 17-ին ԱՄՆ-ի 110-րդ կոնգրեսը առաջին նստաշրջանի H.Con.Res.150¹³ բանաձևով Վրաստանի ժողովրդին ու կառավարությանը շնորհակալություն է հայտնել ամբողջ աշխարհում իսլամիստական ահաբեկչության դեմ նրանց ցուցաբերած աջակցության ու նվիրվածության, ինչպես նաև Իրաքում և Աֆղանստանում անվտանգություն ու կայունություն հաստատելու ջանքերի համար:

Ահաբեկիչների դեմ պայքարի համագործակցության համատեքստում Վրաստան-ԱՄՆ հարաբերությունները գնալով խորանում են, և բարձր մակարդակի պաշտոնական փոխայցելությունները ավելի հաճախադեպ են դառնում: Մակայն Ռուսաստանի պարագայում հակառակ է տեղի ունենում: ՌԴ նախագահ Պուտինը այդպես էլ պաշտոնական այց չի կատարել Վրաստան, և կողմերի միջև հարաբերությունները գնալով սրվում են:

ԱՄՆ-ն Վրաստանի հետ համագործակցության հեռանկարում ցանկանում էր ՆԱՏՕ-ի կամ ԱՄՆ-ի գորքերը տեղակայել Վրաստանի տարածքներում, որն էլ, անշուշտ, օգտագործվելու է ՌԴ-ի և Իրանի դեմ:

2008 թ. վրաց-օսական հնգօրյա¹⁴ պատերազմից հետո Վրաստանի ղեկավարությունը պետության անվտանգության պահպանման ու ամրապնդման քաղաքականությունը կապում էր միայն ԱՄՆ-ի ու իր դաշնակիցների հետ, ուստի 2009 թ. հունվարի 9-ին ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսն ու Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն Վաշինգտոնում ստորագրեցին ռազմավարական համագործակցության հուշագիր, որը, անշուշտ, կողմերի միջև հարաբերությունների ամրապնդմանը նոր լիցք ու որակ հաղորդեց¹⁵:

White House, February 25, 2004, հասանելի է՝ <https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2004/02/20040225-1.html>, 12.08.2019:

¹² Տե՛ս «Text: Bush's speech in Georgia», BBC official website, Tuesday, 10 May 2005, 16:46 GMT, հասանելի է՝ <http://news.bbc.co.uk/2/hi/europe/4534267.stm>, 04.11.2019:

¹³ Տե՛ս «US 110th Congress, 1st Session, Resolution - "H.Con.Res.150", House of Representatives, Congress.gov, May 17, 2007», հասանելի է՝ <https://www.congress.gov/bill/110th-congress/house-concurrent-resolution/150> 04.08.2019:

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս Դժաճան Ի. Пятидневная война, Россия принуждает к миру. М., «Европа», 2008, էջ 184:

¹⁵ Տե՛ս U.S. Department of State, «United States-Georgia Charter on Strategic Partnership»,

ժամանակ գլուխ է բարձրացնում, որի մասին հայտարարել է նաև ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, որին ի պատասխան Վրաստանի չորրորդ նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Վրաստանում ԱՄՆ դեսպանի հետ այցելել է Պանկիսի կիրճ տեղում իրավիճակը պարզելու: Այնուհետև նա տարածել է հայտարարություն. «Պանկիսում ամեն ինչ խաղաղ է և ոչ մի առիթ չկա մտահոգվելու»²⁵, սակայն իրականությունն այլ է:

Նույն այս կիրճից Իսլամական պետության շարքերը համալրելու են մեկնել ահաբեկիչներ, որոնց մեջ կան նաև կարևոր պաշտոններ զբաղեցնողներ, որոնք Սիրիա են գնացել 2011 թ.-ից, ու այդ միտումը շարունակվում է: Նրանցից Օմար Շիշիանին սիրիական ահաբեկիչների հրամանատարներից էր, իսկական անունը Թարխան Բատրիաշվիլի էր: Նա 2016 թ. սպանվեց Սիրիայի հյուսիսարևելյան հատվածում ԱՄՆ-ի օդային ուժերի ռազմարձագանքների ժամանակ²⁶: Սա նշանակում է, որ ահաբեկիչներին դեռևս լիովին չեն ոչնչացրել, նրանք շարունակում են մեկնել Սիրիա Իսլամական պետության բանակում կռվելու համար, և Պանկիսի կիրճը դեռևս ահաբեկիչների պատրաստման, զինման և վարժեցման վայր է:

Իսկ 2017 թ. նոյեմբերի 22-ին Վրաստանի պետական անվտանգության ծառայությունը Թբիլիսիում հայտնաբերել և հակաահաբեկչական հատուկ գործողությունների ժամանակ սպանել է Ալ-Քաիդա ահաբեկչական խմբավորման վտանգավոր ահաբեկիչ Ահմեդ Չադանին, որը նույնպես ազատ էլումուտ է ունեցել Չեչնիայից դեպի Պանկիսի կիրճ: Նրա անունը տեղ էր գտել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Ալ-Քաիդայի պատժամիջոցների ցանկում²⁷:

Չեչնիայի ղեկավար Ռամզան Կադիրովը ժամանակ առ ժամանակ հայտարարում է Չեչնիայից Վրաստան ճանապարհի ու երկաթուղի կառուցելու անհրաժեշտության մասին, որին կտրականապես դեմ են Վրաստանի իշխանությունները²⁸: Եթե այս ծրագիրը իրագործվի, ապա դա ՌԴ-ն Վրաստանին միացնող ամենակարճ ճանապարհը կլինի (Արգունի կիրճով դեպի Վրաստան Պանկիսի կիրճ), ինչը թույլ կտա ավելի արագ մուտք գործել Թուրքիա, իսկ այնտեղից էլ Եվրոպա, որն անշուշտ չի բխում նաև ԱՄՆ-ի շահերից:

Եվ եթե Կադիրովին հաջողվի իրականացնել այս մտահղացումը, ապա շատ հնարավոր է՝ Պանկիսի կիրճում բնակվող քիստերին (էթ-

²⁵ **Георгий Двали**, “Грузия не нашла базы террористов в Панкисском ущелье”, Коммерсантъ, Тбилиси, 31.01.2016, 17:02, <https://www.kommersant.ru/doc/2905610>, 22.10.2019:

²⁶ **St u** “Islamic State commander Omar Shishani dead, says Pentagon”, BBC’s official website, 14.03.2016, հասանելի է՝ <https://www.bbc.com/news/world-middle-east-35808738>, 15.10.2019:

²⁷ **St u** State Security Service of Georgia, ” Statement of the State Security Service of Georgia”, 01.12.2017, հասանելի է՝ <https://ssg.gov.ge/en/news/291/saxelmtsifo-usafitxoebis-samsaxuris-ganxadeba>, 28.10.2019:

²⁸ **St u** “Рамзан Кадыров – Строительство дороги из Чечни в Грузию в интересах многих стран, и я надеюсь, в Грузии поймут, что лучший сосед – Россия”, Ambebi.ru, 14.11.2019, հասանելի է՝ <http://ambebi.ru/article/619-ramzan-kadyrov-stroitelstvo-dorogi-iz-chechni-v-g/>, 15.11.2019:

նիկ չէչեններին) վերցնի իր հովանավորության տակ, որը Վրաստանի անվտանգության առումով մեծ ռիսկ է պարունակում, քանի որ նրա մտադրությունների հետագիծը ուղիղ համեմատական է ահաբեկիչների ճանապարհային քարտեզին:

Անկախ հանգամանքներից՝ Վրաստանը ԱՄՆ-ի համար «Ընդդեմ միջազգային ահաբեկչության գլոբալ կոալիցիայի» առաջամարտիներից է և շարունակում է մնալ ԱՄՆ անվտանգության կարևոր գործընկերների խմբում²⁹:

Բանալի բառեր – *Պանկիսի կիրճ, քիստեր (էթնիկ չէչեններ), վրաց-ամերիկյան համագործակցություն, Իրաք, Աֆղանստան, ահաբեկչություն, Վրաստանի զինված ուժեր, աջակցություն ահաբեկչության դեմ պայքարում, միջազգային անվտանգություն*

ЭДГАР ЧАХОЯН – Особенности сотрудничества Грузии и США в борьбе с терроризмом. – Статья посвящена фактам, событиям и обстоятельствам активности террористов в Панкисском ущелье. Само их присутствие там угрожает государственности Грузии и безопасности населения. Подробно освещена прямая поддержка США южнокавказской стране, а также опасности и риски возможного проникновения террористов из Грузии в соседние Армению, Россию, Турцию и Азербайджан. Рассмотрены также реальные мотивы, цели, методы и механизмы сотрудничества двух стран в борьбе с терроризмом, а также формы и масштабы участия и поддержки, которую оказывают американцам Вооружённые силы Грузии в Афганистане и Ираке.

Ключевые слова: *Панкисское ущелье, кисты (этнические чеченцы), грузино-американское сотрудничество, Ирак, Афганистан, террор, Вооружённые силы Грузии, поддержка в борьбе с терроризмом, международная безопасность*

EDGAR CHAKHOYAN – The Peculiarities of Georgia-US Cooperation in the Fight Against Terrorism. – The article detailed the peculiarities of cooperation between Georgia and the United States in the fight against terrorism. Attention has been paid to all the circumstances, facts, and events initiated by terrorists in the Pankisi Gorge that threaten Georgia's statehood and population security. The level of US direct support to Georgia, as well as the dangers and risks of possible terrorist penetration from Georgia to neighboring Armenia, Russia, Turkey, and Azerbaijan, are covered in detail. This article focuses on the real motives, objectives, methods, and mechanisms of counter-terrorism cooperation between the parties, as well as on the forms and sizes of participation and support by the Georgian Armed Forces in Afghanistan and Iraq.

Key words: *Pankisi Gorge, Kists (ethnic Chechens), Georgian-American cooperation, Iraq, Afghanistan, terror, Georgian Armed Forces, support in the fight against terrorism, international security*

Ներկայացվել է՝ 13.12.2019, Գրախոսվել է՝ 03.02.2020, Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020

²⁹ St' u Bureau of Counterterrorism of US Department of State, "Country Reports on Terrorism 2017", September 2018. էջ 87-89, <https://www.state.gov/reports/country-reports-on-terrorism-2017/>